47րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 698 — Կ. ՊՈԼԻՍ — 11/24 ՕԳՈՍՏՈՍ 1903 — ԵՐԿՈՒՇԱԲԹԻ — 1 ՃԵՄԱԶԻՒԼ ԱԽԷՐ 1321 — 11 ԱՂՈՍԹՈՍ 1319

Journal Arménien
MANZOUMÉ-I-EFKIAR
Grand' Rue de la S-Porte,
CONSTANTINOPLE

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ՅՈՎՀԱՆՆԷՍ Փ. ԳԱՅԼԷՐԵԱՆ
ՈՐՈՒ Կ'ՈՒՂՂՈՒԻ ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԳՐՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
38, Պապը Ալի ճամբան, 38

Խմբագրութեան ուղղուած գրութիւններ ետ չեն տրուիր։

# Մանզումէի Էֆքեար

## ՀԱՅԱԹԵՐԹ ԱՌԱՒՕՏԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

منظومهٔ افكار
ارمنيجه يومى وسياسى غزته‌در

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ
| | Տարեկան | Վեցամսեայ |
|---|---|---|
| Պոլսոյ համար | 30 ղր. | 50 ղր. |
| Գաւառներու համար | 108 » | 60 » |
| Արտասահմանի համար | 25 Ֆր. | 13 Ֆր. |

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
Մէկ անգամի համար, տողը 5 ղրուշ,
Մէկ անգամէ աւելի ծանուցմանց համար համաձայն պայմաններ։

10 ՓԱՐԱ — ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ «ՄԱՆԶՈՒՄԷ» ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՌԱՒՕՏԵԱՆ — 10 ՓԱՐԱ

## ՎԱՂՈՒԱՆ ԹՈՒՈՎ
## ԿԵԱՆՔԸ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

Խիստ ուշագրաւ թղթակցութիւն մը ՄԱՆԶՈՒՄԷԻ Լոնտոնի թղթակից ՍԹՕՐԹՄԷՐԸՆԷ

## ԱՄԱՌՆԱՅԻՆ ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ
## ՈՒՂԵՒՈՐԹԵՐԷՍ

(ՄԱՆՉԷՍԹԸՐԷՆ ՎԻԵՆՆԱ)

Ա.

ՀՈԼԱՆՏԱ

Անգղիացիք իրաւամբ դաստիարակութեան լրացուցիչ մասը կը համարին ճամբորդութիւնը, որ նորանոր գործնական ծանօթութեանց հաւաքումը կը նպաստէ, անձնական գաղափարներու ընդլայնման և ուսման ամրապնդման։ Անոնք, որոնց ձեռքը բերնին կը հասնի, ինչպէս կ'ըսենք ժողովրդական բացատրութեամբ, չուայլութիւն չեն համարիր իրենց պիւտճէին մէջ դնել ճամբորդութեան յատկացուած գումար մը, ինչպէս նաև տարր յատկացուած արձակուրդ մը, զոր գործատէր թէ պաշտօնեայ ամէն տարի կը կատարեն։ ...

մը անմեկնելու կամ հասկնալու, և ուրիշներ ալ, աւաղ, իրենց անգիտութիւնները կ'ատամեն գահերից ճաշակներու մէջ։ Եւրոպիոյ ամբողջ երկայնութիւնը կտրելու համար այս անգամու ընտրած գիծս մերայնոց շատ յաճախելի չէ եղած, այս է Հոլանտայի, Ռէնի և Դանուբի ճամբան, զոր յաճախակի ճամբորդութեանցս փորձառութեամբ կընամ յանձնարարել իր գեղեցկութեան, հանգստաւէտութեան և քիչ մ'ալ իր աժանութեանը համար։

Անգլիոյ արեւելեան ափերուն վրայ կան շատ նաւահանգիստներ առօրեայ կանոնաւոր հաղորդակցութեան մէջ ցամաքային Եւրոպիոյ հետ. ատոնցմէ մէկն է Հարիչ Լոնտոնի արեւելեան կողմը դէմ առ դէմ հոլանտական Հուք կոչուած նաւահանգստին անգլիական ջրանցքին, 101 մղոն լայնքովը բաժնուած։

Ցերեկէն վերջ ժամը 3ին կը մեկնիմ Մանչեսթրէ Հարիչի կառախումբով, որ ճամբան ժողվելով հիւսիսային գաւառի քաղաքներէ եկած նոյնանպատակ կառքերը, երկար կառախումբ մը գոյացուցած կը հասնի Հարիչի քարափը գիշերուան 10.30ին մեկնելիք շոգենաւին մօտ։ ...

«ՄԱՆԶՈՒՄԷ»Ի ԹԵՐԹՕՆԸ

ՔԱՍԻՄ — 206

## Կնճռոտ Հանգոյց Մը

ՎԷՊ
ՑԵՂԱԿԱՆ-ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԷ

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Զ.

—Հիմա չիտակը խօսեցէ՛ք օրիո՛րդ, ըսաւ վարժուհին ու թախանձանօք հառաչեց, ...

(Շարունակելի)

